ՀՆՏԱԽՈՒԶԱԿԱՆ ՊԵՂՈՒՄՆԵՐ ՂԱՓԱՆԻ ՇՐՋԱՆՈՒՄ (1970—1971 ԹԹ.)

Ղափանի շրջանը հնագիտական տեսակետից գրեթե ուսումնասիրված չէ։ Հնագիտական նյութի անբավարարության պատճառով մեր պատկերացումները տվյալ շրջանի նյութական մշակույթի առանձնահատկությունների, ընդգրկած սահմանների և այլ հարցերի մասին խիստ աղոտ են։ Ստորև հրապարակում ենք ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի հանձնարարությամբ մեր կատարած պեղումների արդյունքները, ընդգրկելով մասամբ և Ղափանի երկրագիտական թանգարանում[1] գտնվող որոշ նյութեր, որոնք ձեռք են բերվել հողային աշխատանքների ժամանակ։

Տարբեր դարաշրջաններին պատկանող պեղված հուշարձաններից վաղագույնը հանդիսանում է 1970 թ. Շիկահող գյուղի անտառտնտեսության ճանապարհի եզրին պեղված քարարկղային տիպի դամբարանը։ Այն ուղղված էր հյուսիս-արևելքից դեպի հարավ-արևմուտք (դամբարանի չափերն են՝ 120×60×45 սմ)։ Կմախքը պառկած էր ծալած վերջույթներով, ձախ կողքի վրա, դեմքով հարավ-արևելք։ Գանգի ծոծրակային մասում գտնվեցին սև գույնի, թեթև փայլ ունեցող խեցանոթի բեկորներ։ Մասնակի վերականգնումից հետո պարզվեց, որ դրանք ձեռքով պատրաստված, նեղ հատակով և ուռուցիկ իրանով փոքրիկ կճուճի բեկորներ են։ Ուսերի վրա և իրանի ուռուցիկ մասում կճուճը զարդանախշված էր երկզույգ հորիզոնական և դրանց միջև թեք տարված խոր գծազարդերով (աղ. I, նկ. 1)։ Նմանօրինակ զարդանախշեր ունեն նաև Բաղաբուրջում (աղ. I, նկ. 2) ու Շրվենանցում պատահականորեն հայտնաբերված սև, խամրած գույնի փոքրիկ կճուճները, որոնք ուսերի և իրանի վրա արված հորիզոնական գրծազարդերի արանքում ունեն թեք գծերով լցված եռանկյունաձև զարդանախշեր[2]։ Նմանօրինակ զարդանախշերով և պատրաստման նույն տեխնիկայով խեցանոթներ են հայտնաբերվել Արթիկում, Գոլովինոյում, Լենինականում[3] և ուշ բրոնզի ու վաղ երկաթի դարաշրջանին պատկանող այլ հուշարձաններում, որոնք թվագրվում են մ. թ. ա. II հազարամյակի վերջով։ Ելնելով բերված զուգահեռներից, վերը նկարագրված խեցանոթները նույնպես թվագրում ենք նշված ժամանակաշրջանով։ Ընդ որում, ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունների արդյունքները, մ. թ. ա. XII—XI դարերի խեցեղենին բնորոշ է դառնում նախկին խեցեղենին հատուկ սև փայլի խամրում և զարդանախշերի պարզեցում, որը կատարվում է հիմնականում թաց կավի վրա փորագիր գծանախշեր կատարելով[4], հանգամանք, որն առկա է նկարագրված խեցեղենի վրա։

Նույն ժամանակաշրջանով պետք է թվագրել էքսկավատորավար Ս. Հարությունյանի՝ Քաջարանի բաց հանքում և Շիկահողում պատահականորեն հայտնաբերած սակրերը (աղ. I, նկ. 4, 5)[5]։ Սրանք ունեն մի դեպքում լայն, կիսաշրջանաձև (Քաջարանի օրինակը), իսկ մյուս դեպքում (Շիկահողինը)՝ դեպի ցած նեղացող աշխատանքային սայրեր, որոնք ավարտվում են կտրված թևիկներով։ Այս գծերով նրանք նմանվում են մ. թ. ա. XII—X դդ. պատկանող նյութերի հետ Ալավերդում, Ակներում, Ախթալայում, Թաքիայում և Հայաստանի այլ պեղավայրերում հայտնաբերված սակրերին[6]։ Սակայն կոթառի ձևով (փոքր-ինչ ցած թեքված ուսեր և մեջքի մասում, համեմատած ստորինի հետ, ավելի լայն) սրանք ավելի շուտ մոտենում են Քիրքիրջանյան գանձում, Առաջաձորում և Ադրբեջանական ՍՍՀ այլ վայրերում հայտնաբերվածներին[7], դրանով իսկ հանդես գալով որպես սակրերի լոկալ տարբերակ։ Թերևս այդ են վկայում և նրանց աշխատանքային սայրերի թևերին արված եռաթև ճառագայթի տեսքով ուռուցիկ զարդանախշերը, որոնք կոթառների վրա հանդես են գալիս մի դեպքում քառատամ սաների, մյուս դեպքում՝ վերևում լայն և կոթառի ստորին մասում միացող թեք գծերի տեսքով։ Նման զարդանախշերից զուրկ են Անդրկովկասի այլ վայրերում

---

1 Այսուհետև՝ ՂԵԹ։

2 Գտնվում է ՂԵԹ, գույք №№ 112, 114։

3 Հ. Հ. Մնացականյան, Դամբարանների պեղումները Գոլովինո գյուղում, «Աշխատություններ», Հայաստանի Պետական պատմական թանգարանի (ՀՊՊԹ), հատ. 5, Երևան, 1959, նկ. 20, էջ 41։

4 Հ. Ա. Մարտիրոսյան, Ուշ բրոնզեդարյան բնակավայրեր և դամբարանադաշտեր, Երևան, 1969, էջ 34։

5 Գտնվում են ՂԵԹ, գույք №№ 18 և 278։

6 Սակրերի մասին մանրամասնությունները տե՛ս Т. С. Хачатрян, Орудия труда эпохи поздней бронзы и раннего железа Армении, «Труды» Государственного исторического Музея Армении (ГИМА), т. V, էջ 242—246։

7 К. Х. Кушнарева, Памятники эпохи поздней бронзы в Нагорном Карабахе, СА, XXVII, 1957, էջ 138, 157, նկ. 2 (13), 19 (5)։

հայտնաբերվածները, որը և ենթադրել է տալիս, թե դրանք բնորոշ են Ղափանի տեղական տարբերակին։

Թաղման գույքով աղքատ էր և 1971 թ. Շիկահող գյուղի միջնակարգ դպրոցի բակի հյուսիսային կողմում բացված քարարկղային տիպի դամբարանը (չափերն են՝ 146×55×52 սմ)։ Նախորդի պես, սա ևս ուղղված էր հյուսիս-արևելքից հարավ-արևմուտք։ Չնայած նրա հարավային պատը ամբողջովին ավերվել էր դպրոցի բակի հարթեցման ընթացքում, բայց կմախքը շատ լավ էր պահպանված։ Այն պառկած էր ձախ կողքի վրա, ծալած վերջույթներով։ Դամբարանի հյուսիս-արևելյան անկյունում հայտնաբերվեց սև, փոքր-ինչ խամրած, ձեռքով պատրաստված սափորիկ։ Ունի գնդաձև իրան, որն ավարտվում է բավական լայն (տրամ. 10 սմ), հարթ հատակով։ Նրա լայնաբերան բարձր վզիկը իրանին է միանում ալիքաձև ուռուցիկությամբ, որի վերին և ստորին մասերով անցնում են հորիզոնական ներճկված եզրագծեր։ Շրթի ծայրից վզի հիմքն է իջնում կտրվածքում կլոր, աղեղնաձև կանթը (աղ. 1, նկ. 3)։ Սափորի թրծվածքը անհամաչափ է։ Այս սափորից ամենևին չեն տարբերվում Ադրբեջանական ՍՍՀ Ախմախի գյուղի մոտ գտնվող դամբարաններում հայտնաբերվածները, որոնք պեղվել էին է. Ռեսլերի կողմից։ Այս դամբարաններից պետք է առանձնացնել № 2-ը,



Աղ. 1

որտեղ նկարագրված սափորիկի նմանակը ուղեկցված է բրուտի անիվով պատրաստված գնդաձև իրանով, հարթ հատակով և ճոխ զարդանախշեր ունեցող միականթ սափորով։ Վերջինս իր ճշգրիտ զուգահեռներն ունի Բայլուկայա գյուղի մոտ պեղված № 1, Ռոաջաձորի №№ 1 և 2 ու Ղարարագի այլ վայրերում պեղված դամբարանների խեցեղենում[8]։ Նշված դամբարաններից հայտնաբերվել են նաև բրոնզից պատրաստված տարատեսակ իրեր (սրեր, սանձեր, նետասլաքներ, սեանյան տիպի դաշույններ, երկժանիներ և այլն), որոնք իրենց զուգահեռներն ունեն Հա-



Աղ. 11

[8] К. Х. Кушнарева, նշվ. աշխ., էջ 140—151, նկ. 4—5, 11, 13, 15, 17։

յաստանի մ. թ. ա. XI—X դարերով թվագրվող հուշարձաններում։ Այս տեսակետից առանձին հետաքրքրություն է ներկայացնում Առաջաձորի № 1 դամբարանում հայտնաբերված, բրոնզից պատրաստված ցլագլուխ գլխակալը, որի կրկնակը, հավանաբար, պատրաստված նույն վարպետի ձեռքով, հայտնաբերվել է նույն ժամանակագույնով № 2 դամբարանում հայտնաբերված սափորին է նման Շիկահող-Ղափան նոր կառուցվող ճանապարհահատվածի շինարարության ժամանակ պատահարար բացված դամբարանում հայտնաբերված սափորը, որը նախորդից տարբերվում է կանթի բացակայությամբ. լայնաբերան վզին ունի փայլեցման եղանակով արված



Նկ. III

շրջանին պատկանող, Տոլորսում պատահականորեն բացված հարուստ դամբարանում[9]։ Նշվածներից բացի, կարելի է բերել նույն ժամանակաշրջանին պատկանող բազմաթիվ զուգահեռներ ևս (Վարդաքար, Թաքիա և այլն), որոնք ցույց են տալիս, որ Շիկահողի № 2 դամբարանը ևս պետք է թվագրել մ. թ. ա. XI—X դարերով։

Պատրաստման տեխնիկայով, ինչպես և ուղղահայաց գարդագծեր, որոնք ավելի հատկանշական են մ. թ. ա. I հազ. սկզբին պատկանող խեցեղենի համար (աղ. I, նկ. 6)[10]։ Առաջարկված ժամանակագրության օգտին է խոսում և նույն դամբարանում հայտնաբերված «սևանյան» տեսակի բրոնզե դաշույնը, որի շեղբի երկու երեսները կենտրոնական մասում ունեն վերից վար ձգվող ուռուցիկություններ (աղ. I, նկ. 9)։ Հ. Ա. Մարտիրոսյանի և Ս. Ա. Եսայանի կարծիքով նման դաշույնները, լայն տարածում ու-

9 А. О. Мнацаканян. Находки предметов бронзового века в селении Толорс (в Зангезуре) Армянской ССР. «Краткие сообщения института истории материальной культуры» (КСИИМК), вып. IV, 1954: Отчеты археологической комиссии (ОАК), նկ. 12։

10 Նշված դամբարանից հայտնաբերված իրերը պահպանվում են Շիկահողի միջնակարգ դպրոցում։ Նյութերը մեր տրամադրության տակ դնելու համար շնորհակալություն ենք հայտնում դպրոցի դիրեկտոր ընկ. Ս. Մկրտչյանին։

նենալով մ. թ. ա. XI—X դդ. Կուր և Արաքս գետերի միջև ընկած տերիտորիայում, հետագայում իրենց տեղը զիջում են երկաթից պատրաստված նույնաձև դաշույններին[11], չնայած բրոնզից պատրաստվածները վերապրուկային ձևով շարունակում են գոյատևել մինչև մ. թ. ա. VII դարը։

Առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում և վերոհիշյալ դամբարանում հայտնաբերված վերջին իրը, որը թերթ բրոնզից պատրաստված ճակատակալ է, կենտրոնական մասում ունի ձվածիր տեսք (լայն.՝ 11 սմ), որն աստիճանաբար նեղանալով, ծայրերում բարակում է և ձևավորում փոքրիկ օղակներ, որոնցով անց է կացվել կապիչը։ Ճակատակալը (երկար.՝ 41,5 սմ) ամբողջությամբ զարդանախշված է փորագիր երկրաչափական պատկերներով։ Դրանց մեջ հատկապես առանձնանում է կենտրոնական մասում փորագրված կրկնագիծ քառանկյունը, որի անկյուններում տեղադրված են ուղղանկյունաձև թևերը։ Նրա եզրագծերի միջև ընկած տարածությունը լցված է փորագիր կետանախշերով։ Ճակատակալի մնացած մասերը զարդանախշված են փորագրման եղանակով կատարված եռանկյունի և քառանկյունի պատկերներով (աղ. I, նկ. 7)։ Այս գծերով ճակատակալը նման է Կիրովականում հայտնաբերվածին, որը գտնվել է մ. թ. ա. IX—VIII դդ. պատկանող այլ իրերի հետ[12]։ Զարդանախշերի փորագրման նախաուրարտական ժամանակաշրջանին բնորոշ[13] տեխնիկան ակա է և Շրվենանց գյուղում պատահականորեն հայտնաբերված ճակատակալի վրա (աղ. I, նկ. 8), որն իր նախշերով նման է նախորդին։ Այս հանգամանքը թույլ է տալիս այն տեղադրել նույն ժամանակագրական շրջանակներում։

Նվազ հետաքրքրություն չեն ներկայացնում և է. Ա. Ռեսլերի՝ Գորիսի շրջանի Տեղ գյուղում կատարված պեղումների արդյունքները[14]։ Դժբախտաբար նկարների բացակայությունը դժվարացնում է դրանց թվագրելու գործը։ Սակայն նկատելով իրերի թռուցիկ նկարագրությունից, ենթադրում ենք, որ պեղված 8 դամբարաններում հայտնաբերված կավամանները, սեանյան տեսակի դաշույնները, ապարանջանները, ճերմակ շաղախով լցված բրոնզե կոճակները և մյուս իրերը, որոնք իրենց զուգահեռներն ունեն Ղարաբաղում[15], անտարակույս պատկանում են մ. թ. ա. II հազ. վերջին և I հազ. սկզբին։

Ավելի ուշ ժամանակաշրջանի նյութեր տվեց Շիկահողի դպրոցի բակի կենտրոնական մասում բացված քարարկղային տիպի դամբարանը (չափերն են՝ 160×75×105 սմ)։ Կմախքը, որ պատկանում էր երկարագանգ, մոտ 40 տարեկան[16] կնոջ, գտնվում էր դամբարանի արևմտյան մասում և պառկած էր աջ կողքի վրա ծալած վերջույթներով։ Դեմքով հյուսիս-արևելք ուղղված գանգը հանգչում էր երկու փոքրիկ հարթ գետաքարերի վրա։

Հետաքրքիր էր և ձեռքերի դիրքը. դրանցից աջը դրված էր գլխի տակ, իսկ ձախը գտնվում էր դեմքի առջևում, ուր և հայտնաբերվեց բրոնզե նեղ ճակատակալի փոքրիկ բեկորիկ, որի վրա արված երկու անցքերը հավանաբար նախատեսված էին կաշվի վրա ամրացնելու համար (աղ. II, նկ. 4)։ Աջ թևի վրա անց էին կացված բրոնզե երեք ապարանջան, որոնք պատրաստված էին ձուլածո եղանակով (աղ. II, նկ. 3), իսկ ձախ թևի վրա գտնվեցին երկու բարակ ապարանջան, որոնք պատրաստված էին բրոնզե լարերից (աղ. II, նկ. 10)։ Բացի ապարանջաններից, աջ ձեռքի մատներին գտնվեցին բրոնզից պատրաստված երկու մատանիներ (աղ. II, նկ. 5, 6)։

Կմախքի վզի և ուսոսկրների մոտերքում հայտնաբերվեց փոքրիկ մանյակ, որը բաղկացած էր երկնագույն շաղախից պատրաստված երեք տակառիկաձև և յոթ բրոնզյա տարատեսակ (պարուրաձև, գլանաձև, եռաթև) ուլունքներից (աղ. II, նկ. 7)։ Բացի ուլունքներից, գտնվեց և բրոնզյա շղթայիկի բեկոր, որից պահպանվել էին երկու օղակներ (աղ. II, նկ. 9)։ Առանձին հետաքրքրություն է ներկայացնում իր տեսակի մեջ առայժմ եզակի, բրոնզից պատրաստված արծվագլուխ կոթառով փոքրիկ դաշույն-կախիկը, որն ըստ երևույթին թալիսման է եղել (աղ. II, նկ. 12)։

Այս իրերից բացի, կմախքի կոնքամասում գտնվեց բրոնզից պատրաստված կոճակ (աղ. II, նկ. 8)։ Դամբարանի հյուսիսային պատի մոտ դրված էին կարմիր գույնի երկու գեղեցիկ սափոր (աղ. II, նկ. 1, 2)։ Պատրաստված լինելով բրուտի անիվի վրա, սափորները ունեն լայն, հարթ հատակի վրա նստած գնդաձև իրաններ, որոնք ավարտվում են կենտրոնա-

---

[11] С. А. Есаян, Оружие и военное дело древней Армении, Ереван, 1966, էջ 73—76։

[12] А. А. Мартиросян, Армения в эпоху бронзы и раннего железа, Ереван, 1964, էջ 216։

[13] Ս. Հ. Դևեջյան, Լոռի-Բերդի № 2 դամբարանի ոսկե և արծաթե զարդերը, ՊԲՀ, 1971, № 1, էջ 272։

[14] ОАК за 1898 г., էջ 166—168։

[15] А. А. Ивановский, По Закавказью, «Материалы по археологии Кавказа» (МАК), 1911, т. VI

[16] Մարդաբանական տիպը պարզված է պրոֆ. Ա. Ջ. Ճաղարյանի կողմից։

կան մասում նեղ, դեպի բերանը լայնացող բարձրը, գեղեցիկ վզիկով։ Դրանցից մեկը վզի հիմքային մասում ունի երեք ալիքաձև ուռուցիկություններ, որոնք զուգորդվելով իրանին արված անկյունաձև եռաշար սանրատամ զարդանախշերի հետ, առանձին դեղեցկություն են հաղորդում սափորին։ Նրա նուրբ ձևը ավելի է ընդգծվում աղեղնաձև կանթի միջոցով, որը ըսկըսվելով փոքր-ինչ դուրս թեքված շուրթի տակից, միանում է իրանին (աղ. II, նկ. 2)։ Սափորներից մյուսը, գուրկ լինելով զարդանախշերից, առաջինից տարբերվում է և կանթի ձևով. լինելով կլոր, այն տեղադրված է իրանի ուսային մասում (աղ. II, նկ. 1)։ Այս սափորից ամենևին չի տարբերվում Բաղարուրջում պատահականորեն հայտնաբերվածը (աղ. III, նկ. 3)։ Դրա հետ Ղափանի երկրագիտական թանգարանն են մուտք գործել սև, խամրած գույնի միականթ, եռոտանի թաս (աղ. II, նկ. 11) և չորրոտանի կենդանու տեսքով պատրաստված խեցանոթ (աղ. III, նկ. 2)։ Դրանք պատրաստման տեխնիկայով և գույնով նման լինելով սափորներին, իրենց ճշգրիտ զուգահեռներն են գտնում Ղափանում (աղ. III, նկ. 1), Շիկահողում, Գեղանուշում[17], Թալիշի Ջոնի և Բազզուր[18] գյուղերում հայտնաբերված նյութերում։ Դրանց զուգահեռներն են Մուսի-Երիում հայտնաբերված կենդանակերպ և Խրթանոցում ու Երևանում պեղված թռչնաձև կավանոթները[19], որոնք, ինչպես և նախորդները, թվագրվում են մ. թ. ա. VIII—VII դդ.։

Բերված զուգահեռները թույլ են տալիս այս դամբարանի նյութերը թվագրել մ. թ. ա. VIII—VII դդ.։ Առաջարկված ժամանակագրությունը հաստատվում է և Վարդենիսի շրջանի Կարճաղբյուր գյուղի նույն ժամանակաշրջանին պատկանող դամբարանադաշտի պեղումների արդյունքներով։ Այդտեղ, բազմաթիվ իրերի շարքում, հայտնաբերվեց փոքրիկ սափորիկ, որը պատրաստման տեխնիկայով, գույնով, մասամբ զարդանախշերով նման է Շիկահողի վերոհիշյալ դամբարանում հայտնաբերվածներին[20]։ Ինչ վերաբերում է Շիկահողի դամբարանում հայտնաբերված մյուս նյութերին, ապա դրանք (եթե առանձնացնենք ապարանջանները, որոնք նույնպես իրենց զուգահեռներն են գտնում տվյալ ժամանակաշրջանին պատկանող պեղավայրերի նյութերում) չեն կարող կայուն ժամանակագրող նյութ հանդիսանալ, քանի որ ընդգրկում են կիրառության բավական մեծ ժամանակահատված (սկսած ուշ բրոնզի ժամանակաշրջանից)։

Խոսելով ապարանջանների մասին՝ նշենք, որ Շիկահողի օրինակներից ոչնչով չեն տարբերվում Արծվանիկ գյուղի քարարկղային դամբարանում հայտնաբերվածները։ Դամբարանը, որ նախորդի պես ուղղված էր արևելքից-արևմուտք, ավերված էր հանդիպակաց անկյունների առանցքով (այդտեղ շեներ էր կառուցվում, և դամբարանի պատի քարերը երևում էին հողի ուղղահայաց կտրվածքում)։ Լրացուցիչ պեղումների ժամանակ (1971 թ.) այդտեղ հայտնաբերվեց միայն թևի ոսկրի փոքրիկ բեկորի վրա պահպանված վեց բրոնզյա ապարանջան (աղ. II, նկ. 14, 15)։ Դամբարանի արևելյան մասում հայտնաբերվեց գանգի ճակատային մասը, դեմքով դեպի հյուսիս։ Այլ նյութեր (չհաշված ինչոր խեցանոթից մնացած կարմիր գույնի փոքրիկ բեկորիկը) դամբարանում չհայտնաբերվեցին։

Պահպանվածությամբ այս դամբարանին չէր զիջում և Շիկահող գյուղի անտառտնտեսության ճանապարհի եզրին գտնվող, նույնպես քարարկղային տիպի դամբարանը, որը պեղվեց 1971 թ.։ Սա, որ նույնպես ավերվել էր հողային աշխատանքի ընթացքում, նախորդների պես ուղղված էր արևելքից-արևմուտք։ Նրա պահպանված մասերի չափերն էին՝ երկար. 155 սմ, լայն. 50 սմ, բարձր. 40 սմ։ Պեղումների ընթացքում հայտնաբերվեցին վերջույթների ոսկորների շատ փոքրիկ բեկորներ, որոնցով, սակայն, հնարավոր չէր պարզել կմախքի դիրքը։ Միակ իրը, որ հայտնաբերվեց այս դամբարանի հյուսիսային պատի մոտ, կարմիր գույնի միականթ, եռոտանի փոքրիկ թասն էր, որը ձևով ամենևին չէր տարբերվում Բաղարուրջի օրինակից։ Տարբեր էին միայն սրա զարդանախշերը, որոնք արված լինելով խազելու եղանակով, հորիզոնական և ուղղահայաց տարված երկշար գծազարդեր էին (աղ. II, նկ. 13)։

Որոշակի հետաքրքրություն են ներկայացնում և Բաղարուրջում՝ Դմիտրի Բաղդասարյանի տնամերձ հողամասից 1970 թ. հայտնաբերված խեցանոթները, որոնք ամենայն հավանականությամբ քարարկղային տիպի ավերված դամբարանի նյութեր են եղել։ Կավամաններից երկուսը բրուտի անիվով պատրաստված դեղնա-վարդագույն թասեր են։ Դրանցից մեկը զարդարված է շուրթի տակից և իրանի կենտրոնական մասով անցնող զուգ հորիզոնական գծերով (աղ. III, նկ. 6), իսկ մյուսը ունի շուրթից սկսվող կլոր, փոքրիկ կանթ, որով և իր ճշգրիտ զուգահեռն է գտնում Լեռնաձորում պատահականորեն հայտնաբերված նմուշի մեջ (աղ. III, նկ. 7)։ Մյուս երկու խեցանոթները նույն տեխնիկայով

---

17 Նյութը հրատարակության է պատրաստում Ռ. Մ. Թորոսյանը։

18 J. de Morgan, La préhistoire Orientale, t. III, Paris, 1927, նկ. 267, 268։

19 Նույն տեղում, նկ. 306, էջ 303։

20 Նյութը հրատարակության է պատրաստում Հ. Հ. Մնացականյանը։

պատրաստված և նույն գույնի սափորներ են, որոնք ունեն փոքր-ինչ ձգված, լայն հատակներով իրաններ։ Այս ընդհանուր գծերից բացի, դրանցից մեկն ունի բարձր վզիկ և ուսի վրա կեղծ, փոքր կանթ (ազ. III, նկ. 5)։ Ի տարբերություն սրա, մյուսն ունի անմիջապես շուրթից սկսվող և ուսին միացող աղեղնաձև կանթ (ազ. III, նկ. 4)։ Այս սափորից ամենևին չեն տարբերվում Ջուջևանում հայտնաբերվածները, որոնք ուղեկցվել են վաղ հայկական (մ. թ. ա. VI—IV դդ.) ժամանակաշրջանին պատկանող նյութերով[21]։ Նմանօրինակ սափորներ են հայտնաբերվել նաև Այրիվանքում, Կարճաղբյուրում[22] և Հայաստանի վաղ հայկական դարաշրջանին պատկանող այլ պեղավայրերում։ Հետևաբար վերը նկարագրված նյութը պետք է թվագրել մ. թ. ա. VI—IV դդ.։ Մ. թ. ա. I հազարամյակի II կեսով պետք է թվագրել և Արծվանիկում հայտնաբերված, ներկայումս Մոսկվայի Պատմության թանգարանում պահվող պաշտամունքային նշանակություն ունեցող բրոնզե արձանիկների կոմպլեքսը, որոնց ճշգրիտ զուգահեռները հայտնի են Սարիղամիշից և Ուկրաինայից[23]։ Դժբախտաբար վերջիններիս հայտնաբերման հանգամանքները անհայտ են, որը և թույլ չի տալիս որոշակի եզրակացությունների հանգել մ. թ. ա. I հազարամյակի II կեսում նշված երկրների միջև գոյություն ունեցած կապերի մասին։

Առկա նյութերի ուսումնասիրությունը թույլ է տալիս առաջ քաշել նախնական բնույթի մի քանի ենթադրություններ։ Այսպես, հետազոտվող շրջանի ուշ բրոնզի և վաղ երկաթի դարաշրջանի մշակույթն ուսումնասիրելու ժամանակ նշվեց սակրերի կառուցվածքային առանձնահատկությունը, որոնք նմանության գծեր ունենալով Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում հայտնաբերվածների հետ, այնուամենայնիվ առանձին տարբերակի են պատկանում։ Մյուս կողմից, ինչպես մատնանշում է Հ. Ա. Մարտիրոսյանը, Տոլորսում հայտնաբերված նետասլաքներից Լեռնային Ղարաբաղում չեն հանդիպում և սակավ են մերձևանյան դամբարաններում։ Այս նյութերի կողքին, ինչպես տեսանք, կան և այնպիսիք (օր. սպիտակ շաղախով լցված բրոնզյա կոճակները, ցլագլուխ գլխակալը և այլն), որոնք ամենևին չեն տարբերվում Լեռնային Ղարաբաղում հայտնաբերվածներից։ Նշված առանձնահատկությունները և նմանության գծերը ենթադրել են տալիս, որ տվյալ ժամանակաշրջանում Ղափանի շրջանը, հանդիսանալով «Զանգեզուրյան» լոկալ մշակութային օջախի մի մասը, սերտ փոխհարաբերությունների մեջ է գտնվել ողջ Անդրկովկասի, բայց հատկապես՝ Լեռնային Ղարաբաղի հետ։ Հետագայում, մ. թ. ա. VIII—VII դդ. զգալի մերձեցում է նկատվում թալիշյան, իրանական և զանգեզուրյան մշակութային օջախների միջև։ Այդ են վկայում, թերևս, կենդանակերպ խեցանոթները, որոնք մեծ նմանություն ունեն Թալիշում հայտնաբերվածների հետ։ Սակայն Ղափանի շրջանում հայտնաբերված սափորների ձևերը և զարդանախշերը բնորոշ չեն Թալիշին և խիստ հազվադեպ են հանդիպում Հայաստանի մյուս շրջաններում։ Զտարվելով այդ կապերի բնույթի վերաբերյալ հապճեպ ենթադրություններով, նշենք միայն, որ տվյալ ժամանակաշրջանում և նրան հաջորդող դարերում, որ հարուստ են եղել քաղաքական բուռն իրադարձություններով, Ղափանի շրջանում, ինչպես և ողջ Հայաստանում հանդես է գալիս վաղ հայկական մշակույթը։

Օ. ԽՆԿԻԿՅԱՆ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ

Հայկազյան հայագիտական հանդես, հատ. Գ, խմբագիր Երվանդ Հ. Քասունի, Բեյրութ, հրատարակություն Հայկազյան կոլեջի հայագիտական ամբիոնի, 1972, 326 էջ, նկարագարդ։

Հանդեսի սույն հատորը բացվում է Լ. Խաչիկյանի և Ա. Մաթևոսյանի «Դամասկոսի թանգարանի հայկական պատառիկներ» (էջ 9—54) հոդվածով, որտեղ մանրամասն ուսումնասիրված են օմայանների մկկիթի «Գանձատուն» կոչված գմբեթի տակ գտնվող հայերեն ձեռագրերի պատառիկների 34 թերթ-մխավոր պարունակող հավաքածուն, որը փաստորեն բաղկացած է 13

21 Ս. Ս. Զիլինգարյան, Վաղ հայկական հուշարձաններ Ջուջևանի դամբարանադաշտում, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1971, № 2, էջ 69—73, տախ. III, նկ. 1։

22 Նյութը հրատարակության է պատրաստում Հ. Մնացականյանը։

23 Ս. Ա. Եսայան, Զանգեզուրի վաղ հնագիտական հուշարձանները, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1972, № 4, էջ 69—70։ Георг Гоян, 2000 лет армянского театра, том 1, М., 1952, էջ 303—304, նկ. 74—84։